

# ՀԱՅԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝ ՈՒՐԱԽԱՆԱԼՈՒ

*Posted on September 3, 2023 by Keghart*



Category: [Opinions](#)



## Լիւսի ՏԵՍՄԵՆՆԵՐ, Երեւան, 1 Սեպտեմբեր 2023

2020 թուականի Արցախեան 44-օրեայ չարաքաստիկ պատերազմէն ետք, որուն ընկերա-հոգեբանական հետեւանքները դեռ երկար ժամանակ պիտի զգանք, մանաւանդ հայրենաբնակ հայ ժողովուրդին մօտ յառաջացաւ վիճակ մը, որ սկիզբը շատ բնական ըլլալով, հետագային սակայն, ըստ ինծի, վերածուեցաւ «չարաշահուած» ախտանշանի մը: Հայր ինչպէ՞ս կրնայ ուրախ ըլլալ, երբ պատերազմ պարտուած է: Հայր ինչպէ՞ս կրնայ զուարճալի պահեր ապրիլ, երբ ակելի քան 4000 զոհ տուած է արցախեան վերջին պատերազմին:

Ճիշդ է, պատերազմը անբաղձալի իրադարձութիւն է, չարիք է, որովհետեւ ինչքան ալ լաւ սպառազինուած ըլլաս, ինչքան ալ մեծաթիւ զօրք ունենաս, ինչքան ալ դաւաճանական դէպքերը յաջողիս կանխել, արդիւնքը մէկ է՝ ակեր ու մահ: Ահաւասիկ Ուքրաինան, որ Արեւմուտքէն կը ստանայ միլիառաւոր տոլարի ռազմական օգնութիւն եւ «անխուսափելի յաղթանակ»ը հաւաստիացնող բարոյական աջակցութիւն, ակելի քան մէկուկէս տարիէ կը յաջողի դէմ դնել ռուսական գերտերութեան, բայց երկիրը ակերակներու եւ գերեզմանոցի վերածուելու հաշուոյն: Նոյնը եւ Ռուսիան, ունի իր զոհերը, մայրաքաղաքի շէնքերուն վրայ յաճախակիօրէն խորտակուող ուքրաինական անօդաչու սարքերը, որ նոյնիսկ եթէ ֆիզիքական թեթեւակի վնաս պատճառէն, զգացական ու հոգեբանական ահաւոր լարուածութիւն կը յառաջացնեն բնակիչներուն մօտ:

Բայց այս բոլորը չի նշանակեր, որ պատերազմ տեսած, թէկուզ պարտուած ժողովուրդը դատապարտուած է ցլեանս սուգի ու տրտմութեան:

Ես ծնած ու ապրած եմ երկրի մը մէջ, ուր 15 տարի եղբայրասպան կռիւներ եղած են, իսրայելեան պատերազմներ, ահաբեկուած են պետութեան երկու նախագահներ, մէկ վարչապետ, քաղաքական բազմաթիւ դէմքեր, անվտանգութեան մակարդակը զերօ է, մայրաքաղաքին սիրտը տրաքած է նաւահանգիստի պայթումով, եւ ուր տակաւին մինչեւ օրս կան պատերազմին ակերները կրող շէնքեր, բայց ժողովուրդը չէ մոռցած ինչպէս ուրախանալ: Շատեր կրնան այս մէկը վերագրել ժողովուրդին «ամօթ չունենալու» վատ յատկանիշին, բայց ես կ'ըսեի՝ մեռելներէն, ակերներուն տակէն յառնող, ոտքի կանգնելու համար, դարձեալ ուրախանալու համար ջանք չինսայող ժողովուրդի յատկանիշ է այդ: Եւ երբ անոր հարցնես, թէ ո՞վ է լիբանանցին կամ ինդոնէս իրմէ ներկայացնել իր ազգը, ան առաջինը կը յիշէ փիւնիկեցի արմատներ ունենալու հանգամանքը, Սուրբ Գիրքին մէջ յիշուած իր յաւերժական մայրիներու ծառը, իր համադամ ճաշերը, տեսարժան վայրերը, իր ժողովուրդին ջերմ, եռանդուն, հիւրասեր եւ կենսալի ըլլալը: Մէկ խօսքով՝ ինչ որ դրական է:

Միւս կողմէն կայ հայր, որ ամենաբարձր ատեաններէն մինչեւ ամենաաննշան վայրերու մէջ ինքն իր մասին խօսած ժամանակ ԱՌԱՋԻՆ անգամ պարտադիր պիտի յիշէ իր

ցեղասպանուած ըլլալը, իր անելի քան մեկուկէս միլիոն զոհերը, իր կորսնցուցած հայրենիքը, իր կոտորակուած ազգը, իր բռնագրաւուած պիպլիական Արարատը, արցախեան իր ՊԱՐՏՈՒԿԾ պատերազմը: Այո՛, պարտադիր կը յիշէ նաեւ առաջին քրիստոնեայ ազգն ըլլալու հանգամանքը, բայց մնացեալ բաժիններուն մէջ դժուար գտնես դրական յատկութիւն մը, որ յիշատակէ կամ լոյս սփռէ անոր վրայ:

Ճիշդ է, մեր ազգը շատ ցաւեր, շատ դաւեր, պատերազմներ, կորուստներ ու զոհեր ունեցած է, բայց այս կը նշանակէ որ պէտք է միշտ տխրուի ըլլանք, վախնանք ուրախանալէ կամ մեզի վայել չհամարե՞նք երջանկութիւնը: Տակաւին ոչ-հեռու անցեալին եր՝ 2021 թուականին, երբ Հայաստանի մէջ բողոքի ու ընդվզումի ալիք բարձրացաւ, որովհետեւ Յունիս 1-ին՝ Մանուկներու համաշխարհային օրուան առիթով, երեխաներուն յատուկ յայտագիր նախատեսուած էր Հանրապետութեան հրապարակին վրայ: «4000-է անելի զոհ տուած ենք, ինչպէ՞ս կարելի է զուարթ յայտագիր կազմակերպել»: Բայց երեխաներուն մեղքը ո՞րն է: Շռայլօրէն «անհոգ մանկութիւն» ցանկացողները չկրցան մարսել երեխաներուն զուարճանքի պահեր հրամցնող այդ ծրագիրը: Աւելի քան 600 տարի պետականութենէ զրկուած, անկախութեան տիրանալու համար դարերով ապստամբած, պայքարներ մղած, ամեն տեսակ զոհողութիւն կատարած ազգը նոյնիսկ ընդվզեցաւ իր պետականութեան դրսեւորումը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետութեան 30-ամեակի տօնակատարութեան դէմ, քանի որ «4000-է անելի զոհ տուած, պատերազմ պարտուած ենք»: Նոյն պատճառաբանութեամբ ալ շատեր հպարտութեան փոխարէն, «վիզը ծռած» կը նշէին Հայոց բանակի եւ Սարդարապատի ճակատամարտի տօները, թէ՛ պարտուած բանակ ունինք, պարտուած երկիր ենք: Այս ի՞նչ անհեթեթութիւն: Մեր այլ յաղթանակներով, սխրագործութիւններով, մեր վաստակածով, մեր ազգային արժէքներով ո՞վ պիտի ուրախանայ ու հպարտանայ, եթէ ոչ մենք: Ինչո՞ւ համար մերժել ամեն դրական եւ ցնծալի երեւոյթ, որովհետեւ «դամբանի մրուրով» գրուած էջե՞ր ալ ունինք:

Ահաւասիկ տխուր պատկերը մեր ազգին, որ հակուած է իր կեդրոնացումը անելի յաճախ սեւեռելու իր կորսնցուցածին, իր այսօր չունեցածին քան ունեցածին վրայ: Ոչ, մենք չենք ուրանար կամ դրժեր մեր կորուստները, չենք մոռնար, իրաւատեր ու պահանջատեր ենք (ճիշդ թէ սխալ ձեւով՝ այդ ուրիշ թեմա է), բայց նաեւ պէտք չէ մոռնանք, որ մենք ուրախանալու ալ իրաւունք ունինք: Մենք կրնանք մէկ կողմէ նշել մեր տօները, մեր յաղթանակները, ձեռքբերումները, կրնանք ողջունել Հայաստանի մէջ կազմակերպուող որեւէ ուրախալի միջոցառում, բայց միաժամանակ յիշատակել մեր նահատակները, սգալ մեր մարտիրոսացած լոյս տղաներուն կորուստը, բնական կամ ճանապարհային աղէտներու մեր զոհերը: Մենք կրնանք մէկ կողմէ, օրինակի համար, Վարդավառի անանդական տօնը նշել (որմէ դժգոհ էին շատեր վերջերս, թէ՛ ինչպէ՞ս կարելի է ուրախանալ, երբ Արցախը շրջակափակուած է) եւ յաջորդ վայրկեանին իսկ շարունակել մեր չընդհատուող պայքարը՝ Արցախը ապաշրջափակելու ուղղութեամբ:

Մէկ խօսքով՝ տոնական մթնոլորտը եւ ուրախութիւնը չեն նշանակեր ուրանալ, դասակից ըլլալ, իրամատը թողել, պայքարին վերջ տալ: Եթէ ուրախանանք, այդ չի նշանակեր որ մեր դատին կը դաւաճանենք: Եթէ կը ինդանք, այդպէս չէ որ տեղին արտասուիլ չենք գիտեր:

Նոյն տրամաբանութեամբ ալ, թեմայէն քիչ մը շեղելով, աւելցնեմ անձնական կարծիք մը. եթէ օտար արուեստագէտներ կը հրաւիրենք Հայաստան, այդ չի նշանակեր, թէ մեր մշակոյթը կ'անտեսենք: Եթէ նոյնիսկ համաշխարհային, «անորակ» երգիչի մը կամ երաժշտական խումբի մը համերգը կազմակերպենք Հայաստանի մէջ, այդ երբեք չի նշանակեր մեր ազգային ու բարձրորակ երգերն ու երաժշտութիւնը ոտնակոխ ընել: Համաշխարհային արուեստագէտները, թեւեւ կոպիտ պիտի հնչէ, «չեն մեռած» Հայաստան գալու համար, բայց իրենց գալով Հայաստանը քիչ մը աւելի ճանաչելի պիտի դառնայ, քարտեզին վրայ քիչ մը աւելի փնտռուած պիտի ըլլայ օտարներուն համար, որովհետեւ պարբերաբար կազմակերպուող այդպիսի համերգները ոչ միայն եկամուտ պիտի ապահովեն Հայաստանին, այլեւ աշխարհագրականօրէն մօտ գտնուող երկիրներու քաղաքացիներ այդ առիթով կրնան այցելել Հայաստան, զբօսաշրջիկներու եւ Հայաստանը յայտնաբերողներու հոսք ապահովելով մեր երկրին: Եւ Ռ՛Չ, մենք մեր ազգայինը, մեր աւանդականը վարկաբեկած պիտի չըլլանք: Վկայ ամէն շաբաթ Հայաստանի մէջ տեղի ունեցող տասնեակ մշակութային միջոցառումները, որոնք գրեթէ միշտ ամբողջութեամբ լեցուն են գնահատել գիտցող հանդիսատեսներով:

\*\*\*

Աշխարհահռչակ փիլիսոփայ գրող Ժըպրան Խալիլ Ժըպրան կ'ըսէ. «Ես կը փափաքիմ, որ կեանքս մնայ արցունք ու ժպիտ. արցունք, որ կը կիսեմ կոտորուած սրտերու հետ, եւ ժպիտ՝ որ կ'ըլլայ գոյութեամբս ուրախանալու վերնագիր»:

Արդարեւ, կեանքը ժպիտի ու արցունքի խառնուրդ է: Թող մեր ժպիտը գէթ ըլլայ հայուն հաւաքական գոյութեամբ ուրախանալու դրսեւորում: Տխրութիւնը կայ ու կայ, բայց ուրախանալու ալ արդար իրաւունքը ունինք:

## Comments



**Յարութ Մարտիրոսեան** – 2023-09-06 13:29:33

Յարգոյ Լիւսի: Քիչ թէ շատ ես ալ նման անցեալէ մը կու գամ: Ոչ մէկ խնդիր կայ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ նկատմամբ, երբ երկրի մը մէջ ամեն ինչ բնականոն է: Խնդրին կիզակետը 'ուրախացուցիչ' ներկայացումները չեն, ոչ՝ լեզուն ոչ՝ ալ ոճը: Խնդիրը կը կայանայ այդ գաղափարին ծնունդէն, ժամանակէն, պարունակութենէն: Հաշտեցնելու խնդիր կայ երբ Հայաստան նաւը փոթոռկի մէջ ցուրտ հիւսիսային Ատլանտեանի վրայ կը նաւարկէ, իսկ Թիթանիքի գերագոյն հրամանատար նաւապետը կերուխումի մէջ կը տւայտի եւ նման օրակարգ կը հրամցնէ իր ճամբորդներուն: Այս վարչապետին համար ուրախանալու ի խնդիր ամեն ինչ աճուրդի դրուած է: Եղեռնի Յուշակոթողի տնօրէնը Թանգարանին տրամաադրուած արխիւային նիւթերը օր ցերեկով կը հրկիզէ, տրամադրուած գումարները կը գործածէ Հայաստանի տարածքին Ազերի գերեզմաններու հետախուզութեամբ: Մատենադարանի տնօրինութիւնը մեր ինքնութեան գերագոյն հաւազածոյին վրայ նստած Հոմերոսի Իլիականի թարգմանութեամբ կը զբաղի, որ դար ու կէս առաջ թարգմանուած է արդէն: Այս անցնող ամռան քանի մը տասնեակ ձեռնարկներ տեղի ունեցան մինչ այդ 120,000 Արցախցիներ սովամահութեան ենդարկուած են մինչեւ օրս: Այս Վարչապետի գահը զբաղեցողէն առնուազն կը սպասուէր երեք տարի առաջ հինգ հազար թանկագին մատղաշ կեանքեր զոհելէն ետք պարկեշտութիւնը ունենար հրաժարելու: Նոյն խնդրոյ կիզակետը պիտի մնայ եթէ նոյն նաւապետը մնայ այդ ազնւագոյն ղեկին: Հայաստան, Սփիւռք, Արցախ, ամենքս ցաւօք այդ նոյն նաւուն մէջն ենք: